

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խաշառութ Բալասանյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

«Գործառույթ» («ֆունկցիա») տերմինն առավել բնութագրական է հասարակական, կյանքի երևույթների էության արտահայտման համար: Այդ իսկ պատճառով այն առանձնանում է տարբեր զիտություններում լայնորեն օգտագործման և դրսերման բազմակերպությամբ: Այդ տերմինն առավել լայնորեն է օգտագործվում հասարակական զիտություններում: Դրա հետ մեկտեղ, «գործառույթ» տերմինը բազմանշանակ է և բավականին բարդ: Ցուրաքանչյուր զիտություն յուրովի է մեկնարանում դրա բովանդակությունը: Ըստ Տ.Ն. Ռադկովի՝ «այն ընդունելի է ցանկացած հարաշարժ կառուցվածքի բնութագրման համար, որը պայմանավորված է այն զիտությունների ճանաչողական խնդիրների յուրահատկությամբ, որոնցում օգտագործվում է այդ տերմինը...»:¹

Իրավագիտության մեջ «գործառույթ» տերմինն օգտագործվում է հասարակական կյանքի այնպիսի կարևորագույն երևույթների սոցիալական դերի բնութագրման համար, ինչպիսիք են պետությունը և իրավունքը:

Իրավունքի սոցիալական նշանակությունն ի հայտ է զայխս դրա գործառույթներում: Իրավունքի գործառույթներում արտահայտվում է հասարակական կյանքում իրավունքի ակտիվ դերը: Ցանկացած հասարակությունում իրավունքի հիմնական առաքելությունը կայանում է նրա անդամների շահերին համապատասխան իրավական կարգավորման մեջ:

Գործառույթներն արտացոլում են հասարակական հարաբերությունների և մարդկանց վարքագծի վրա իրավունքի ներգործության հիմնական ուղղությունները, ինարավորություն են ընձեռում տալու իրավաբանական նորմերի «աշխատանքի»

¹ Ст. и Родько Т.Н. Понятие функции права. - В. кн.: Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права//Отв. ред. Марченко. М.Н. М., Зерцало, 1998, էջ 53:

ընդհանրացված բնորոշումը:

Առաջին անգամ իրավունքի գործառույթների սահմանման հարցը սրությամբ դրվեց խորհրդային իրավաբանական զիտության մեջ: Անցյալ դարի 70-80-ականներին նման սահմանման համար որպես ելակետային դրույթ ծառայեց հետևյալ կանխադրույթը: «հասարակական գործառույթ» հասկացությունն արտացոլում է, մեկ համակարգի (իրավաբանական վերնաշների) մեկ այլ ավելի ընդհանուր համակարգի (հասարակության) մեջ ներառման կարգը որոշարկող փոխադարձ կապը: Տվյալ գործառույթն իրատեսորեն կարող էր բնութագրվել միայն դրա «կոտորակման». կոնկրետացման շնորհիվ: Խորհրդային իրավաբան-գիտնականները նշում էին կոնկրետացման երկու հիմնական ուղղությունները: Դրանցից մեկը կապված էր հասարակական հարաբերությունների որպես ամբողջության ձևաչափն հետ. որի առնչությամբ հարկ է առանձնացնել իրավունքի գործառույթները: Հենց այդ տեսակենտից էլ ելնելով՝ տրվում էին «իրավունքի գործառույթ» հասկացության սահմանումները: Այսպես, Ռ.Ռ. Ակերսենքը գործառույթների տակ հասկանում էր իրավական ներգործության ուղղությունները: Մեկ այլ խորհրդային հայտնի իրավաբան գիտնական Ի.Ե. Ֆարբերը գտնում էր, որ իրավունքի գործառույթը դրա սոցիալական նշանակությունն է, կամ ներգործության հիմնական ուղղությունը: «Իրավունքի գործառույթը... գրել է Տ.Ն. Ռադկոն: հասարակական հարաբերությունների վրա դրա սոցիալական նշանակությամբ որոշարկող ներգործության հիմնական ուղղությունն է».

Վերուժելով բերված սահմանումները կարելի է անել այն եզրակացությունը, որ վերջինս առավել լիակատար է, քանի որ դրանում պարունակվում էր գործառույթների իրականացման ընթացքում իրավունքի սոցիալական նշանակության իրացման վերաբերյալ

² Ст. 9 Теория государства и права. Учебник для юридических факультетов. М.: Норма-Инфра. М., 1998. с. 24.

³ Ст. 9 Алексеев С.С. Проблемы государства. Г. Г. Свердловск. 1972. № 24.

⁴ Ст. 9 Фарбер С.С. О воспитании юного гражданина общенародного права. Советское государство и право. М., 1963. № 10. с. 12.

⁵ Ст. 9 Радко Т.Н. Понятие и виды функций государства, задачи его права. Вопросы теории государства и права. Саратов. 1971. вып. 2. ч. 1.

Սակայն նշված սահմանման հիմնական թերությունը նրանում է, որ իրավունքի գործառույթների հասկացությունը որպես հասարակական հարաբերությունների վրա ներգործության ուղղությունների, անխուսափելիորեն հանգեցրեց իրավունքի գործառույթների հասկացության «նեղացման»: Բանը նրանում է, որ իրավունքի համատցիալական գործառույթի կոնկրետացման երկրորդ ուղղությունը կապվում էր խորհրդային իրավունքում այնպիսի գործառույթների առկայության ընդրւնման հետ, որոնք պայմանավորվում էին հասարակական կյանքի երեք կարևորագույն ոլորտների կոնումիկայի, քաղաքականության, գաղափարախոսության գոյությամբ: Մասնավորապես, տարածում էր գտել իրավունքի քաղաքական և տնտեսական, ինչպես նաև դաստիարակչական և զաղափարախոսական գործառույթների բնութագրումը: Այդ գործառույթները (դրանք ընդունված էր անվանել սոցիալական) չեր կարելի դիտել որպես հասարակական հարաբերությունների վրա ներգործության ուղղություններ, քանի որ դրանց առկայությունը որոշվում էր ոչ թե այդպիսի ներգործության յուրահատկությամբ, այլ հասարակական կյանքի կառուցվածքի առանձնահատկությամբ:

Բայց ժամանակները փոխվեցին, դրանց հետ փոխվեցին նաև իրավունքի գործառույթների վերաբերյալ իրավաբան-գիտնականների պատկերացումները: Այսօր, իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել ըստ բովանդակության «իրավունքի գործառույթ» տերմինի ամենատարբեր սահմանումների: «Իրավունքի գործառույթը, - գրում է Տ.Ն.Ռադկոն, հասարակական հարաբերությունների վրա դրա ներգործության այնպիսի ուղղություն է, որոնց իրագործման նկատմամբ պահանջմունքն առաջացնում է իրավունքի որպես սոցիալական երևույթի, գոյության անհրաժեշտություն»⁶: Կան նաև ժամանակակից իրավունքի գործառույթի այլ սահմանումներ: Այսպես, ըստ այդպիսի սահմանումներից մեկի, որի հեղինակը հանդիսանում է Վ.Ն.Դմիտրովիք, իրավունքի գործառույթը «հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության հիմնական

⁶Տե՛ս Պածոկ Տ.Ն. Աշված աշխ. էջ 3:

ուղղությունն է»:⁷ Ըստ Վ.Ն. Խրոպանյուկի, իրավունքի գործառույթները «հասարակական հարաբերությունների, մարդկանց վարքագծի վրա դրա ներգործության հիմնական ուղղություններն են»:⁸ Ի վերջո, իրավունքի գործառույթի տակ հասկանում են «կամ իրավունքի սոցիալական ցանկացած նշանակություն. կամ հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության ուղղություններ. կամ ել և՛ մեկը, և՛ միուսը՝ միասին վեցցրած»:⁹

Մեր կարծիքով, իրավունքի գործառույթների տակ հարկ է հասկանալ հասարակական հարաբերությունների վրա դրա ներգործության հիմնական ուղղությունները, որոնք արտացըլում են հասարակական կյանքում իրավունքի ծառայողական նշանակությունը և հանդես են գալիս որպես դրա եղբան դրսերում: Գործառույթներն իրենց նորմատիվ արտահայտությունն են գտնում կարևորագույն օրինաչափական ակտերում իրավական կարգավորման նպատակներ և խնդիրներ դնելու ձևով: Դրանով իսկ լիովին ի հայտ են գալիս իրավունքի սոցիալական նշանակությունը և արդիական ստեղծագործ դերը՝ ազգային պետական շինարարության խնդիրների լուծման հարցում:

Ինչպես տեսնում ենք, ժամանակակից իրավունքի գործառույթների առումով բերված սահմանումների միջև սկզբունքային տարբերություններ չկան. որը զգալիորեն դյուրին է դարձնում դրանց բովանդակության ուսումնասիրությունը: Իրավունքի գործառույթները կարող են դիտարկիթել տարբեր հարթություններում: Սակայն այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել մի շատ կարևոր ելակետային կանոն. քանի որ ժամանակակից իրավունքն անքակտելիորեն կապված է իրավական պետության հետ, ապա դրա գործառույթները գրեթե համբնկնում են պետական իշխանության գործառույթներին:

Համաշխարհային իրավագիտության մեջ իրավունքի

⁷Տե՛ս Դմիտրյով Վ.Н. Теория государства и права. Учебное пособие. Минск: Амальфей, 1998. С. 39.

⁸Տե՛ս Хропанюк В.Н. Теория государства и права (2-е изд., дополн. исправленное). Под ред. Стрекозова В.Г. М.: ЮДИ, 1995. с. 1.

⁹Տե՛ս Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права. Отв. ред. М.Н. Марченко. М.: Зеркало, 1998. с. 1.

գործառույթներն ընդունված է դիտել սոցիալական և հասուկ իրավաբանական տեսանկյունից:

Հայտնի է, որ իրավունքի համատցիալական գործառույթները՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտների՝ էկոնոմիկայի՝ իր շուկայական հարաբերություններով, քաղաքականության, բնապահպանության, հոգևոր, բարոյական հարաբերությունների և այլին վրա իրավական ներգործության հիմնական ուղղություններն են:

Այդ կապակցությամբ առանձնացվում են հետևյալ համատցիալական գործառույթները՝

ա) տնտեսական (շուկայական հարաբերությունների իրավական ապահովում, սեփականության գոյություն ունեցող բոլոր ձևերի՝ իրավաբանական նորմերով ամրագործմ և այլն),

բ) քաղաքական (քաղաքական համակարգի գործունեության իրանական ապահովում),

գ) դաստիարակչական (հասարակության անդամների վրա բարոյական ներգործություն):

Իրավունքի քաղաքական գործառույթի հիմնական խնդիրն իրավական պետության քաղաքական համակարգի գործունեության իրավական ապահովումն է: Նման խնդիր է հետապնդում նաև իրավական կարգավորման քաղաքական գործառույթը, որը, մեր կարծիքով, կկարողանա ներառել այնպիսի ենթագործառույթներ, ինչպիսիք են երկրի քաղաքական ուժերի դաշինքի ամրապնդումը և զարգացումը, անձի ազատության պաշտպանությունը, պետության և անձի փոխգործակցությունում արդար սահմանների ձևավորումը և այլն: Սակայն նշված հարցը կարիք ունի առավել խոր ուսումնասիրության իրավական կարգավորման գործառության ընութագրի վերաբերյալ կուտակված նյութի հիման վրա: Կարծում ենք, որ սեռուն ուշադրություն է պահանջում իրավունքի և ժամանակակից իրավունքի առանձին ճյուղերի իրավական կարգավորման ու գործառույթների հարաբերակցության հիմնախնդիրը: Այդ հարաբերակցությունը պետք է որոշարկվի ընդիհանուրի և առանձնահատուկի կապի ընդհանուր օրինաչափություններով:

Իրավական պետության մեջ դաստիարակչական գործառույթի դերը չափազանց մեծ է: Դա բացատրվում է այն առաքելության

կարևորությամբ. որ կատարում է այդ գործառույթը ժողովրդավարական հասարակությունում: Հայտնի է, որ դաստիարակչական գործառույթն իրավունքի միջոցով դաստիարակումն է, որի իր գոյության իսկ փաստի, և առանձնապես, իրավական կարգադրագրերի իրագործման շնորհիվ ունակ է դաստիարակչական ազդեցություն գործել հասարակության անդամների վրա: Թույլատրելով կամ արգելելով այս կամ այն գործողությունը, ժամանակակից իրավունքը բաղաքացիներին դաստիարակումն է իրենց իրավունքների ու պարտականությունների ճիշտ ըմբռնման և իրականացման ոգով. ձևավորում է ժողովրդավարության իրավագիտակցություն: Ըստ որում, իրավունքի միջոցով դաստիարակումը տեղի է ունենում նաև իրավունքի և իրավական կարգավորման տնտեսական, բաղաքական գործառույթներն իրագործելիս:

Իրավունքի դաստիարակչական գործառույթն իր բովանդակությամբ տրամադրություն տարբերվում է իրավունքի գաղափարախոսական գործառույթից. որն իրականացվում էր խորհրդային պետության մեջ: Եթե իրավունքի գաղափարախոսական գործառույթի եռությունը կայանում էր նորմերի օգնությամբ մարդկանց կյանքի հոգևոր ոլորտում (գիտություն, կրթություն, արվեստ) հասարակական հարաբերությունների կարգավորման խնդրում, ապա դաստիարակչական գործառույթի եռությունը իրավունքի միջոցով հասարակական կյանքի բոլոր ոլորտների կարգավորման գործընթացում անձի գիտակցության վրա ներգործության խնդրում: Ժամանակակից իրավունքի դաստիարակչական գործառույթի առարկան (օբյեկտը) անձի գիտակցությունն է և, ամենից առաջ, նրա իրավագիտակցությունը: Նշված գործառույթի, իրականացման ընթացքում ձևավորում, զարգանում, ամրապնդվում է ժողովրդավարության իրավագիտակցությունը, հասարակության անդամները դաստիարակվում են առաջադիմական գաղափարների, հայցըների, համոզմունքների ոգով:

Տարկ է նշել, որ իրավունքի դաստիարակչական գործառույթի և, իրավական կարգավորման միջև կան շատ ընդհանրություններ և առանձնահատկություններ:

Վերջինս մեզ դրանց, սահմանագաղուման հիմք է տալիս: Սակայն, նախ և առաջ նշենք, որ դրանք սերտորեն փոխկապակցված են:

Իրավունքի միջոցով դաստիարակությունը կարող է լիովին իրագործվել միայն դրա գործառնության պայմաններում: Իրավունքի դաստիարակչական գործառույթն իրավական կարգավորման գործառույթն ունեն, անմիջական և վերջնական ընդհանուր նպատակներ և խնդիրներ: Ժամանակակից իրավունքի դաստիարակչական գործառույթի անմիջական նպատակն է ժողովրդավարության իրավադիտակցության ձևավորումը և ամրապնդումը, իսկ վերջնականը իրավական պետության, բարոյականության ձևավորումը:

Դրա հետ մեկտեղ, իրավունքի դաստիարակչական գործառույթը և իրավական կարգավորման գործառույթը տարբերվում են իրենց ծավալով: Խոսելով կարգավորման դաստիարակչական, գործառույթի մասին, մեր կարծիքով, անհրաժեշտ է լուսաբանել, որ այն իրագործվում է ոչ միայն իրավունքի նորմերի, այլև իրավական երևույթների ամբողջ համակարգի միջոցով՝ նորմատիվ և անհատական ակտերով, օրինականության և իրավակարգի, սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների և այլն:

Իրավական նորմերի դաստիարակչական դերի վերլուծությունը ենթայրում է կարգավորիչ և պաշտպանիչ նորմերի դաստիարակչական նշանակության հետազոտում, դրանց լավագույնս, գուգակցում՝ առավելագույն դաստիարակչական արդյունքի հասնելու նպատակով: Իրավական կարգավորման արդյունքի հասնելու նպատակով: Իրավական կարգավորման դաստիարակչական գործառույթի հետազոտումը կարող է դաստիարակչական գործառույթի վուլերին համապատասխան: Իրականացվել այդ գործընթացի վուլերին համապատասխան: Մասնավորապես, լուրջ դաստիարակչական նշանակություն ունեն Սասնավորսական, լուրջ դաստիարակչական նշանակություն ունեն Արքայական, առաջնային պարտականություն ունեն Հայոց առաջնորդություն ուների առաջացումը, դրանց իրագործումը: Խիստ կարևոր դեր է կատարում իրավական նորմերի հրամայաքար կարևոր դեր է կատարում իրավական նորմերի հրամայաքար կիրառումը, իրավական պետության իրավապահ մարմինների և հասարակական կազմակերպությունների մարմինների գործունեությունը:

Իրավունքի տնտեսական գործառույթը կարող է բնութագրվել՝ կախված էկոնոմիկայի կարգավորման գործում ժամանակակից իրավունքի դերի հետազոտությունների կոնկրետ ուղղություններից (օրինակ, իրավունքը և շուկայական հարաբերությունները, իրավունքը և գիտատեխնիկական առաջընթացը): Արդի

պայմաններում խիստ նշանակալից է շուկայական հարաբերությունների կատարելագործման և հետազո զարգացման գործում իրավունքի դերի հետ կապված ուղղության երևույթը։ Այդ խսկ պատճառով կան բոլոր հիմքերը, համարելու, որ տվյալ ուղղությունը հանդիսանում է ժամանակակից իրավունքի ինքնուրույն գործառույթ։ Իրավական կարգավորման տնտեսական, քաղաքական, դաստիարակչական գործառույթների գործողության ուսումնասիրությունը թույլ է տալիս հետայսու անելու կայուն եզրակացություն համապատասխանաբար տնտեսական, քաղաքական և դաստիարակչական գործառույթների համակարգի գոյության մասին։

Մի որոշ իրավաբան գիտնականներ իրավունքի հասարակական գործառույթների շարքն են դասում նաև այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են մշակութապատմական, սոցիալական վերահսկողության, տեղեկատվական-կողմնորոշչի գործառույթները¹⁰։

Մշակութապատմական գործառույթի բովանդակությունը դրսենորվում է հետևյալ կերպ. իրավունքը որպես ազգային և համաշխարհային մշակույթի դրսենորում նորմատիվային տեսքով՝ կուտակում է հոգևոր արժեքները և ժողովրդի. ողջ մարդկության նվաճումները։ Նկատի ունենք ամենից առաջ մարդու իրավունքները, ժողովրդավարությունը, հասարակության բարոյական հիմքերը, սոցիալական արդարությունը, հավասարությունը։

Սոցիալական վերահսկողության գործառույթի եռթյունը կայանում է մի կողմից սուրբեկտների վարքագծի վրա ազդեցություն գործելու խնդրում, մյուս կողմից, որպես ինչպես բարոյական, այնպես էլ նյութական իրանման, իրախուսման միջոցի՝ այս կամ այն վարքագծի սահմանափակման խնդրում։ Կարևոր է ընդգծել, որ տվյալ դեպքում խոսքը զնում է հենց իրավունքի գործառնության համասոցիալական կառուցակարգի մասին, երբ սուրբեկտների վարքագծի նկատմամբ դեռևս չեն կիրառվում սոցիալական վերահսկողության հատուկ իրավաբանական գործիքները և լծակները։

Տեղեկատվական-կողմնորոշչի գործառույթին համապատասխան

¹⁰ Ст. Синюков П.П. Функции права. В кн. Теория государства и права. Курс лекций. Под ред. Н.И. Матузова, Л.В. Малько. М.:Юристъ, 1997. Гл.156, 157.

իրավունքը հանդես է գալիս սուբյեկտների՝ կոնկրետ տվյալ հասարակության մեջ կազմակերպությունների, ֆիզիկական անձանց, բարոյական կողմնորոշման հզոր աղբյուր: Այդ իմաստով դրա հիմնական խնդիրը կայանում է անհատի օրինաչափ վարքագծի սուբյեկտիվ կողմի սոցիալապես օգտակար, դրական ուղղորդվածության ձևավորման մեջ: Այս կամ այն վարքագծի սոցիալական հնարավորությունների մասին տեղեկատվությունը քաղաքացիները ստանում են տարբեր աղբյուրների միջոցով օրենքներ, որոշումներ, հրամանագրեր, տեղական ինքնակառավարման մարմինների ակտեր: Այդ գործում կարենք դեր են կատարում, նաև զանգվածային լրատվության միջոցները: «Պարզում է, տեղեկատվական կարգավորիչ է,- գրում է Ա.Բ. Վենգերովը, սոցիալական գործընթացների վրա ներգործության այնպիսի միջոցը, որի պարագայում սոցիալական վարքագծի կոնկրետ դեպքերի վերաբերյալ հրապարակավ տարածվող տեղեկությունները հանդես են գալիս կամ ընդօրինակման, կամ էլ դատապարտման նմուշներ, այսինքն զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ այս կամ այն արարքին տրվում է կամ դրական, կամ էլ բացասական նշանակություն»¹¹: Դա մարդկանց օգնում է հասնելու իրենց նպատակադրումներին՝ գոյություն ունեցող իրավակարգի և գործող օրինականության շրջանակներում:

Իրավունքի տեղեկատվական-կողմնորոշիչ գործառույթը կարելի է անվանել նաև հետադարձ կապի գործառույթ: Հայտնի է, որ իրավունքի նորմերի օգնությամբ հասարակական հարաբերությունների կառավարումը դասպում է այն տեսակին, որը կոչվում է հետադարձ կապի սկզբունքով կառավարում: Հասարակական հարաբերությունների կառավարումը և իրավունքի նորմերի միջև հետադարձ կապի կառուցակարգի առկայությունը նշանակում է նաև իրավաբանական պրակտիկայի միջոցով, կրուտակող և այնուհետև օրենսդրին հաղորդվող տեղեկատվության առկայություն: Տեղեկատվության այդ հարահոսք հնարավորություն է ընձեռում խստիվ գիտական հիմքի վրա իրականացնել իրավական կարգավորման գործառույթ, ուսումնասիրել իրավունքի սոցիալական

¹¹ Ст. и Венгеров А.Б. Теория государства и права. Уч. для юрид. вузов. М., Новый юрист. 2005, кг 371:

արդյունավետության. գոյություն ունեցող նորմերի գործունության, դրանց փոխարինման անհրաժեշտության կամ կատարելագործման հարցը:

Պետական իշխանության սուբյեկտների առումով կարելի է տարբերակել իրավունքի օրենսդիր, գործադիր և դատական գործառույթները :

Իրավունքի հատուկ-իրավաբանական գործառույթը հասարակական հարաբերությունների անմիջական կարգավորումն է:

Տայտնի է, որ ցանկացած քաղաքակիրք երկրի իրավունքի համակարգի հիմնական խնդիրը կայանում է հասարակական հարաբերությունների կարգավորման սոցիալական ազատության մեջ դրանց արդարության և հավասարության շրջանակների մեջ դնելու խնդրում: Այդ խնդիրը ժամանակակից իրավունքը լուծում է կարգավորիչ գործառույթի միջոցով:

Հարկ է նշել, որ օտարերկրյա որոշ իրավաբան գիտնականներ կարգավորիչ գործառույթը բաժանում են կարգավորիչ-վիճակագրականի և կարգավորիչ դիեմամիկի: Այսպես, ըստ Վ.Ի. Լեռշինի և Վ.Դ. Պերեվալովի կարծիքի, կարգավորիչ-վիճակագրական գործառույթը, կամ ամբագրման հասարակական հարաբերությունների կայունացման գործառույթը, առավել հստակորեն արտահայտվում է տարբեր սուբյեկտների հասարակական կարգավիճակի սահմանման ժամանակ. մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների, մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունների ամրագրման ժամանակ: Տվյալ հարցում իրենց դիրքորոշումը նրանք պարզաբանում են հետեւյալ կերպ. կարգավորիչ վիճակագրական

Տե՛ս ո **Հազարենկո Գ. Վ.** Գորույուն և պարագաներ պատմություններ. Մ. Օսկ. 89. 1998. Եջ 5-րդ համար:

Աներածեց Է նշել որ առաջին անգամ իրավաբանական գրականության մեջ կարգավորիչ գործառույթը կարգավորիչ վիճակագրականի տարածությունը անհրաժեշտությունը տասին արտահատվել է Ս.Ս. Ալեքսանդր Շատով անվանելով իրավունք կարգավորիչ գործառույթի տարածուակներ հետինակներ փոքր-ինչ այլ կերպ է սահմանվել այլ բարձառությունների բնականակրությունը: Եթե կարգավորիչ-իրավունքը լին պարզ է, այս վեցը է իրավական առթակեր որունք ուղղված են իրավունքի միավորներ և այս ամեն առջապահան իրավական այս մասն իրագործող գաղափարը ուղարկվում է հասարակության մեջ այս կարգավիճակների ասրագրության վերաբերյալ առերթերի կառուներան և ոչ փոփխավանության ապահովության վերաբերյալ առարկանը տե՛ս **Алексеев С.С.** Социальная ценность права в советской концепции. թ. Ա. 1971:

գործառույթն առավելագույնս է արտացոլում իրավունքի բնույթը, և հենց քաղաքացիներին ու կազմակերպություններին է իրավասություն վերապահվում, որի սահմաններում նրանք գործում են ազատութեն, իրենց հայեցողությամբ: «Եվ որքան լայն են տարածված այդ սահմանները, - գրում են Վ.Ի. Լենինը և Վ.Դ. Պերեվալովը, - այնքան մարդիկ ավելի են ազատ իրենց գործողություններում: Կարգավորիչ-վիճակագրական գործառույթն իրագործվում է իրավագործությամբ օժոռող և արգելող նորմերի և դրանց հիման վրա առաջացող պասիվ տեսակի իրավահարաբերությունների օգնությամբ:

Նման դեպքերում իրավունքի սուբյեկտներն իրենք են իրենց սեփական նախաձեռնությամբ դրսերում իրավական ակտիվություն»¹⁴:

Հայտնի է, որ սոցիալական կառավարման գործում որպես կառավարող և կառավարվող համակարգերի հիմնական տարր են հանդես գալիս մարդիկ, իսկ կառավարումը հանգեցնում է նրան, որ որոշ մարդիկ ազդեցություն են գործում մյուսների գիտակցության և վարքագծի վրա: Դա վերաբերում է նաև իրավական կարգավորմանը, որը, լայն իմաստով, հանդիսանում է սոցիալական կառավարման մի մասը, պետական դեկավարման ձև:

Իրավական գիտության մեջ կառավարման գիտության դրույթների օգտագործման հնարավորությունը հիմնավորվում է նրանով, որ պետական մարմինների իրավասուելծ և իրավակիրառական գործունեությունը կազմում է հասարակական հարաբերությունների պետական դեկավարման բարդ գործընթացի մի մասը: Իրավունքի նորմերը (և տարբեր մակարդակներում դրանց միասնությունը) հանդիսանամ են ոչ այլ ինչ քան կոնկրետ հասարակական հարաբերությունների և դրանց ընդհանուր զարգացման դեկավարման միջոց:

Կառավարչական գործունեության միջոցները և եղանակները կախված են կառավարման օբյեկտից: Սակայն, ընդ որում, միևնույն արդյունքին կարելի է հասնել տարբեր ուղիներով: Դժվարին կացություններում անհրաժեշտ է լավագույն լուծման ընտրությունը: Դա վերաբերում է նաև հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմանը:

¹⁴Տե՛ս և Լեյտին Բ.Ի., Պերեվալով Վ.Դ. Социальная ценность и функции права- В кн. Теория государства и права. Учеб. для юрид. вузов и факультетов. М. Норма-Инфра. 1998. էջ 242:

Եթե իրավունքը հասարակական հարաբերությունների կառավարման գործիք է, ապա իրավունքի համակարգը պետք է համապատասխանի ինչպես հասարակական հարաբերությունների բնույթին (կարգավորման առարկային), այնպես և դրանց զարգացման խնդիրներին, նպատակներին: Այլ կերպ ասած, իրավունքի համակարգ կառուցելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև իրավական կարգավորման նպատակները:

ԱՍՓՈՓՈՒՄ

Սույն գիտական հոդվածում հանգամանորեն լուսաբանվում են իրավունքի գործառույթների բովանդակությունը, առանձնահատկությունները, դերն ու նշանակությունը իրավակարգավորման ոլորտում:

Բանալի բառեր. իրավունք, գործառույթ, հիմնական գործառույթ, կարգավորչ գործառույթ, պաշտպանիչ գործառույթ, սոցիալական գործառույթը.

ФУНКЦИИ И ОСОБЕННОСТИ ПРАВА

Хачатур Баласанян
Аспирант Института философии,
социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В настоящей статье подробно освещаются содержание, особенности и роль и значение функций права в сфере праворегулирования.

Ключевые слова: право, функция, основные функции, регуляторная функция, защитная функция, социальная функция.

FUNCTIONS AND FEATURES OF LAW

Khachatur Balasanyan
PhD student of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

This article highlights in detail the content, features and functions of role and significance of law in the field of legal regulation.

Key words: law, function, the main function, regulatory function, protective function, social function.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

**Սյուլվաննա Նազիկյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ**

Սահմանադրական է արդյոք պետությունը՝ այս խնդրում հիմնական դերը պատկանում է իրավունքին. իրավական կարգավորումը կոչված է պահպանել հասարակության մեջ այնպիսի իրավիճակ, որ նրանում չինի ոչ մասնավոր, ոչ էլ պետական կամայականություն:

Իրավական և ժողովրդավարական պետությունների սահմանադրական կարգի կարևորագույն սկզբունքներից է՝ իրավունքի իրավական օրենքի/ գերակայությունը: Իրավունքի գերակայությունն ամենից առաջ սահմանադրության և օրենքի գերակայությունն է: Իրավական պետությունը սահմանադրական պետություն է: Սահմանադրական և հասարակական կարգի հիմնական սկզբունքներն ամրագրվում են երկրի բարձրագույն օրենսդրական ակտի՝ սահմանադրության մակարդակով: Ինչպես նշում է պրոֆեսոր Ն. Այվազյանը «Իրավունքի գերակայությունը, նրա տիրապետությունը հասարակության կյանքի բոլոր կողմերի վրա, անկասկած, իրավական պետության գոյության կարևորագույն պայմաններից է»:

Իրավական պետության ձևավորման և նրա հետագա զարգացման խնդրում վճռորոշ նշանակություն ունի սահմանադրականության գաղափարների, սկզբունքների և հայեցակարգերի իրավաբանորեն ամրագրումը հիմնական օրենքում ու դրանց իրականացման համար համապատասխան մեխանիզմների

¹Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատ. խմբ. Ն.Ա. Այվազյան. Եր., 2016. էջ 139: